ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2021թ. թիվ 845-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2020թ. մարտի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 240-Ն որոշման 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման 2.1-րդ կետով, հիմք ընդունելով համաձայնության մասին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 17.12.2021թ. N 01/17.2/29326-2021 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. 2021 թվականի ՀՀ պետական բյուջեով ՀՀ Լոռու մարզպետարանին «Հանրակրթություն» ծրագրի (դասիչ՝ 1146) «Տարրական ընդհանուր հանրակրթություն» միջոցառումով (դասիչ՝ 11001) նախատեսված գումարի շրջանակներում կատարել վերաբաշխում և ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության մի շարք դպրոցների լրացուցիչ հատկացնել 5253.0 հազ. դրամ՝ համաձայն կից հավելվածի:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

12/17/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 17
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2021թ. դեկտեմբերի 17-ի
թիվ 845-Ա որոշման

Ց Ա Ն Կ

Ֆինանսական վատ վիճակով պայմանավորված լրացուցիչ գումար հատկացվող Լոռու մարզպետարանի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների

NN	Կազմակերպության անվանումը	Գումար /հազ. դրամ/
1	«Վանաձորի թիվ 21 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1514.0
2	«Պուշկինոյի հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1290.0
3	«Ահնիձորի հիմնական դպրոց» ՊՈԱԿ	791.0
4	«Մեծ Այրումի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1658.0
	Ընդամենը	**5253.0**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

17/12/2021

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ